

# ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ հաճախորդ, Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես դատական կարգով, այնպես էլ Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:



**Դատարան** դիմելու դեպքում Ձեր և Բյուրոյի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:



**Ֆինանսական համակարգի հաշտարարին** դիմելու դեպքում Ձեր և Բյուրոյի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք Բյուրոյին: Բյուրոն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 **աշխատանքային** օրից պատասխանը ստանալուց հետո կամ, եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը **չի կարող քննել** Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոքը Բյուրո ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր, բացառությամբ, եթե Բյուրոն այդ ընթացքում տվել է իր վերջնական պատասխանը,
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. Բյուրոյի պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,

Ձգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:



### Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝ .../հաշտարարի անուն ազգանունը/.....  
 Գտնվելու վայրը՝ .....  
 Հեռ.՝ .....  
 Էլ. հասցե՝ .....  
 Ֆաքս՝ .....  
 Կայք՝ .....

Բյուրոն այստեղ լրացնում է սույն ձևի վերջում առկա «\*» կամ «\*\*» նշանի ներքո պարունակվող տեղեկատվությունը, քննորում՝

\* նշանի ներքո նշումը կատարվում է, եթե Բյուրոն Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

\*\* նշանի ներքո նշումը կատարվում է, եթե Բյուրոն Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ չի կնքել գրավոր համաձայնագիր Ֆինանսական համակարգի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ:



### ՀՀ Կենտրոնական բանկ

Գտնվելու վայրը՝

.....

Հեռ.՝ ... Այստեղ լրացվում է Կենտրոնական բանկում սպառողների շահերի պաշտպանության համար պատասխանատու ստորաբաժանման հեռախոսահամարները ..

Էլ. Հասցե՝ .....

Ֆաքս՝ .....

Կայք՝ .....



Հարգելի՛ հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և Բյուրոյի միջև կնքվել է **արբիտրաժային համաձայնություն**, դա նշանակում է, որ Բյուրոյի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք Բյուրոյի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն:

\* Միբեղի՛ հաճախորդ, Բյուրոն հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ Բյուրոն համաձայնել է դատական կարգով չվիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բյուրոյի դեմ կայացված որոշումները:

\*\* Միբեղի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ Բյուրոն չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ Բյուրոն կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից Բյուրոյի դեմ կայացված որոշումները: